ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 01.12.2017 թվականի թիվ 43 որոշումը:

Առդիր 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2017 թվականի N 43

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՅԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մյասնիկ Գալստյանի և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու/Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ միջև կնքված Եկեղեցի Կարմիր Ավետարան շինությունը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն/ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին համաձայնագիրը, ,,Մել և Միլ,, գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի հիմք ընդունելով 20012017-06-0019 իրավունքի պետական գրանցման վկայականը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18/05/2006 թ. թիվ 912-Ն որոշման 3.1-3/, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.2 կետերի պահանջներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Օրինականացնել Մյասնիկ Գալստյանի /ծնված 03/01/1957/ կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 06-095-0088-0008 ծածկագրի տակ գտնվող 0.01964 հա հողամասի վրա 2017 թվականին ինքնակամ կառուցված 31.12 քմ կնքված Եկեղեցի Կարմիր Ավետարան շինությունը և վերոնշյալ շինության նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Մյասնիկ Գալստյանի /ծնված 03/01/1957/ սեփականության իրավունքը:
2. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) հանձնվող 0.01964 հա հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածք, գործառնական նշանակությունը պատմա-մշակութային:
3. Հիմք ընդունելով Մյասնիկ Գալստյանի և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու / Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ միջև կնքված Եկեղեցի Կարմիր Ավետարան շինությունը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին համաձայնագիրը, օրինականացված շինությունը անհատույց սեփականության իրավունքով հանձնել Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ